կը նորոգէ Ս. Յակոբի վանքը, վճարելով նաեւ անոր պարտքը ծանր և մեծ աշխատանքով, և կը ճոխացնէ վանքին ոսկեղէն և արծաթեղէն անօթները (1614 - 1630) (ՄՁ. թ. 15)։ Շինել կուտայ Ս. Յարութեան մօտ՝ Ս. Յովհաննու մատրան կամարները 1631ին. Վերնատան եկեղեցիին (Բ. Գողգոթա) երկայնութիւնը ընդարձակած է երեք կամարներ առնելով Լատիններէն, և փոխարէն անոնց տալով երկեհոնին կից խուցը 1632ին. 1634ի Ծառազատկին (ՄՁ. թ. 23) Գրիգոր պարք. աջակցութեամբ արքունի հանդերձապետ Բաղիշեցի Սաեթիքի, խռովութեանց առաջքը կ'առնու և խաղաղութեամբ կը կատարուի Զատիկը. Ս. Յարութեան տաճարին մէջ Ծառազատիկի առթիւ գոյացած ծախսերն և Ս. Յակոբի մնացեալ պարտքը վճարելու համար կ'ուղևորի Տիգրանակերտ 1634ին, (Թորոս Աղբար Բ. էջ 432) և ապա Բերիա. նոյն թուականին վերադառնալով կը չինէ Ս. Փրկչի վանքին պարիսպները, զերծ մնալու համար տեղացիներուն գիշերային յարձակումներէն. 1641ին, Պեթճալա գիւղի մօտ, կը գնէ այգիներ և ձիթաստաններ, և կը կառուցանէ Վէլիճէ գիւղի աղբիւրը 1642ին։ Գրիգոր Պարք. կը վախճանի 1645ին, և մարմինը կ'ամփոփուի, ինչպէս երախտագիտութեան, Ս. Փրկչի վանքին մէջ. այս ժամանակէն սկսեալ, սովորութիւն կը դառնայ Ս. Յակոբի հանգուցեալ պատրիարքներու մարմինները ամփոփել Ս. Փրկչի մէջ։ Իր մահէն յետոյ, Ս. Յակոբի և Ս. Տեղերու մէջ Ս. Պատարագի ատեն զոհութիւն եւ փառաբանութիւն քարոզին մէջ կը յիշատակուի իր անունը. (Սաւաղան և ժպհ.) Զուար Ճիյէրճի օղլու ուխտաւոր հայ քահանան (1711-1712) իր ուղեգրութեան մէջ կը յիշատակէ թէ՝ Գրիգոր Պարք. Պարոնտէրի դամբարանը գմբէթաւոր էր։

Գրիգոր Պարք.ի ժամանակակից գրիչ մը՝ Յովհան Խիզանցի նոյն Պարք.ին կենսագրականէն յետոյ՝ կը յիշէ օրուան միաբաններուն անունները ՌՁԷ (= 1638) թուական ձեռագիր Յայսմաւուրքի մը (ՄՁ. թ. 1919) յիշատակարանին մէջ հետևեալ կերպով. զտեր Կարապետ երէցանիկ բարունապետն և ած.աբան վրդ.ն եւ զիւր աշակերտն զտեր Ստեփանոսն, եւ զայլ միաբան եղբարսն որ կան այժմ ի սպասաւորութիւն Ս. Յակոբայ, զՅակոբ եպսկ. զտեր Գրիգոր վրդ.ն որ բազում ամօք կայ առ դամբարանիս սբ. Յակոբայ, զտեր Ստեփանոսն, զտեր Մկրտիչն, զտեր Մելքիսեդեկն, զեղկեղի Յոհան գրիչս, զտեր Վարդան, զտեր Յովհաննէս շուսարարն,